ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ «ԱՈՒՏԻԶՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

(այսուհետ՝ հանձնաժողով)

2023թ. նոյեմբերի 9-ի կայացած նիստի

ք. Երևան

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 08.11.2023թ. N2335-Ա/2 հրամանով ստեղծված հանձնաժողովը նոյեմբերի 9-ին, ժամը 12:45-ին գումարել է հանձնաժողովի առաջին նիստը՝ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N1937-Ն որոշման Հավելվածի 19-րդ կետի համաձայն, «1193.Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում «11002. Աուտիզմ և զարգացման խանգարումներ ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում» միջոցառման իրականացման համար դրամաշնորհի հատկացման մրցույթի հայտարարության և մրցույթի հրավերի տեքստի նախագծերը քննարկելու նպատակով:

Մասնակցում էին՝

1.	Թամարա Սարգսյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարության) հանրակրթության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ),
2.	Սուսաննա Ազատյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ (հանձնաժողովի անդամ, գնահատող),

3.	Անահիտ Մարգարյան	Նախարարության ֆինանսաբյուջետային վարչության կրթական ծրագրերի ֆինանսավորման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ, բացող),
4.	Սյուզաննա Առստամյան	Նախարարության իրավաբանական վարչության փաստաթղթերի ուսումնասիրման և դատական գործերի բաժնի ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ, բացող),
5.	Լիլիթ Մնացականյան	«Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն /համաձայնությամբ/ (հանձնաժողովի անդամ, գնահատող),
6.	Լուսինե Բասենցյան	Նախարարության հանրակրթության վարչության հանրակրթական և արտադպրոցական ծրագրերի մշակման և իրականացման բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ (հանձնաժողովի քարտուղար)

Օրակարգ

1.Մրցույթի մասին հայտարարության և հրավերի տեքստի քննարկում, հաստատում:

2. Դրամաշնորհային մրցույթի գնահատման թերթիկի ձևաչափի քննարկում:

3. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում:

Օրակարգի 1-ին հարց

Լսեցին հանձնաժողովի նախագահ Թ. Սարգսյանին:

Քարտուղար Լ. Բասենցյանը ներկայացրեց հայտարարության տեքստը և մրցույթի հրավերի նախագիծը:

Քննարկման արդյունքում հանձնաժողովի անդամները հավանություն տվեցին հայտարարության տեքստի և մրցույթի հրավերի նախագծերին:

Օրակարգի 2-րդ հարց

Քարտուղար Լ. Բասենցյանը ներկայացրեց դրամաշնորհային մրցույթի գնահատման թերթիկի ձևաչափը:

Քննարկման արդյունքում հանձնաժողովի անդամները հավանություն տվեցին դրամաշնորհային մրցույթի գնահատման թերթիկի ձևաչափին:

Հանձնաժողովը, քվեարկության արդյունքում՝ կողմ 5, դեմ 0 որոշեց՝

1. Հաստատել հայտարարվող մրցույթի հայտարարության և հրավերի տեքստերը:
2. Հաստատված հրավերի և հայտարարության տեքստերը հրապարակել էլեկտրոնային armeps համակարգում և ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքէջում:
3. Հաստատել դրամաշնորհային մրցույթի գնահատման թերթիկի ձևաչափը:

Օրակարգի 3-րդ հարց

Քննարկվեց հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացնելու օրը և վայրը:

Որոշվեց. Հանձնաժողովի հաջորդ նիստի օր սահմանել 2023թ. դեկտեմբերի 18-ը ժամը 16:00-ն, վայրը՝ Երևան, Վազգեն Սարգսյան 3, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, 1-ին մասնաշենք, 5-րդ հարկ:

Թամարա Սարգսյան ----------

Սուսաննա Ազատյան ----------

Անահիտ Մարգարյան ----------

Սյուզաննա Առստամյան ----------

Լիլիթ Մնացականյան ----------

Լուսինե Բասենցյան ----------